ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

17 մայիսի 2022թ.N 1952

«ՇԱՄՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՝ Մ. Գրիգորյան

Աբովյանի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Շամս Գրուպ» ՍՊԸ-ի / այսուհետ՝ Ընկերության/ միջև 19.04.2022 թվականին կնքվել է «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, առանց ֆինանսական միջոցների, որի շրջանակներում Ընկերությունը ներկայացրել է պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնագրի ձևով:
ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո Պայմանագրի 8.15 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով 21.04.2022թ. Ընկերությանը ներկայացվել է համաձայնագիր կնքելու, բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել նշված փաստաթղթերը՝ խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները:
Հիմք ընդունելով վերոգրյալը Աբովյանի համայնքապետարանը միակողմանի լուծում է պայմանագիրը:
Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:
Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները Աբովյանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ**

Կապ. Զարգացման ծրագրերի և գնումների բաժնի պետի պաշտոնակատար
Ա. Ծատուրյան